ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---» ---------- 2022թ. N------Ա

ՈՐՈՇՈՒՄ

ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՓՈԽԱՆԱԿՈՒԹՅԱՆԸ
ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով հողային օրենսգրքի 71-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N286 որոշմամբ հաստատված կարգի 32–րդ կետով.

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Համաձայնություն տալ՝ սեփականության իրավունքով Արմինե Գրիգորյանին պատկանող, Դավթաշեն վարչական շրջանի, Դավթաշեն 1-ին թաղամաս 21/39 հասցեում, տարածագնահատման 10-րդ գոտում գտնվող 1400.0քմ մակերեսով հողամասը /անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման 19.11.2014թ. հ.19112014-01-0212 վկայական/, Երևան համայնքի սեփականությունը հանդիսացող Ն.Սաֆարյան փողոցի 16/16 հասցեում, տարածագնահատման 8-րդ գոտում գտնվող 591,78քմ մակերեսով հողամասի հետ փոխանակելուն:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ ՀՐԱՉՅԱ ՍԱՐԳՍՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք - Հ Ի Մ Ն Ա Վ Ո Ր Ո Ւ Մ

«ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՓՈԽԱՆԱԿՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Քննարկվող նախագծով նախատեսվում է սեփականության իրավունքով Արմինե Գրիգորյանին պատկանող, Դավթաշեն վարչական շրջանի, Դավթաշեն 1-ին թաղամասի 21/39 հասցեում, տարածագնահատման 10-րդ գոտում գտնվող 1400.0քմ մակերեսով հողամասը փոխանակել Երևան համայնքի սեփականություն հանդիսացող Ն.Սաֆարյանի փողոցի 16/16 հասցեում, տարածագնահատման 8-րդ գոտում գտնվող 591,78քմ մակերեսով համարժեք հողամասի հետ:

Դավթաշեն վարչական շրջանի, Դավթաշեն 1-ին թաղամասի 21/39 հասցեում, տարածագնահատման 10-րդ գոտում գտնվող 1400.0քմ մակերեսով հողամասը, սեփականության իրավունքով պատկանում է Արմինե Գրիգորյանին /անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման 19.11.2014թ. հ.19112014-01-0212 վկայական/:

Հողամասերի փոխանակությունը պայմանավորված է Դավթաշեն 1-ին թաղամասի 21/39 հասցեում գտնվող հողամասի՝ գերեզմանատանը կից գտնվելու և դրա նպատակային օգտագործումն անհնարին լինելու պատճառով՝ օգտագործման արդյունավետությունը բարձրացնելու նպատակով:

Հողամասերի փոխանակման արդյունքում, ինչպես Երևան համայնքի, այնպես էլ հողամասի սեփականատիրոջ համար հնարավորություն կառաջանա հողամասերն արդյունավետ օգտագործել և կառավարել, ինչպես նաև ստեղծել քաղաքաշինական տեսակետից առավել կանոնակարգված հատված:

Փոխանակվող հողամասերն ընդգրկված չեն հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի կազմում և գտնվում են ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 15-ի հ.2330-Ն որոշմամբ հաստատված Երևան քաղաքի գլխավոր հատակագծով բնակավայրերի նպատակային նշանակության /կատեգորիայի/ բնակելի կառուցապատման գոտում:

Մասնագիտական որակավորում ունեցող «Վի Էմ-Ար Փի» ՍՊ ընկերության եզրակացության համաձայն՝ Ավան, Ն.Սաֆարյանի փողոցի 16/16 հասցեում գտնվող հողամասի շուկայական արժեքը կազմում է 27 300 000 /քսանյոթ միլիոն երեք հարյուր

հազար/ ՀՀ դրամ, Դավթաշեն 1-ին թաղամասի 21/39 հասցեում գտնվող հողամասի շուկայական արժեքը կազմում է 27 100 000 /քսանյոթ միլիոն հարյուր հազար/ ՀՀ դրամ:

Քաղաքացի Արմինե Գրիգորյանը հայտնել է իր համաձայնությունը վճարել հողամասի շուկայական արժեքների տարբերությունը կազմող գումարը:

Համաձայն հողային օրենսգրքի 71-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի և Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի հ.286 որոշմամբ հաստատված կարգի 32-րդ կետի՝ համայնքի վարչական սահմաններում, համայնքի սեփականությունը հանդիսացող հողամասերի փոխանակումը դրանց օգտագործման արդյունավետությունը բարձրացնելու նպատակով կատարվում է համայնքի ավագանու համաձայնությամբ՝ համայնքի ղեկավարի որոշման հիման վրա:

Հաշվի առնելով վերոնշյալ հանգամանքները՝ մշակվել է ավագանու որոշման սույն նախագիծը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ ՀՐԱՉՅԱ ՍԱՐԳՍՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

« ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՓՈԽԱՆԱԿՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Հողամասերի փոխանակությանը համաձայնություն տալու մասին» որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

« ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՓՈԽԱՆԱԿՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Հողամասերի փոխանակությանը համաձայնություն տալու մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեի ծախսերում և եկամուտներում փոփոխություններ չեն առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ ՀՐԱՉՅԱ ՍԱՐԳՍՅԱՆ